ԵՂԻՇԵ ԱՌԱՔՅԱԼԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆ ՈՒԴԻՆԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՈՒՏԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բուն Ադվանքի տարածքի աղվանական էթնիկ ընդհանրություններից միայն մեկի՝ ուդիների մի հատվածն է, որ ցայսօր մնացել է քրիստոնյա։ Քրիստոնյա ուդիների այդ խումբն ապրում է Ադրբեջանի Վարդաշենի շրջանի Վարդաշեն շրջկենտրոնում և Կուտկաշենի շրջանի Նիժ գյուղում։ Վարդաշենից մեր դարի 10-ական թվականների ջարդերից փախած ու Վրաստանում ապաստանած քրիստոնյա ուդիների մի գյուղ էլ կա՝ Օկտոմբերին։ Նշված բնակավայրերի ուդի բնակչությունը պահպանել է ոչ միայն նախնիների որդեգրած դավանանքը, այլև ուդիներեն լեզուն, ազգային կենցաղա-մշակութային առանձնահատկությունները։ Ուդիախոս ուդիներից զատ, Կուտկաշենի շրջանի Սուլթան-Նուխի, Ջոուլու և Մերզաբեյլու գյուղերում նույնպես ապրում են իրենց էթնիկ ինքնագիտակցությունը պահպանած և իրենց քրիստոնյա համարող ուդիներ, որոնք, սակայն, խոսում են ադրբեջաներեն։

Քրիստոնյա ուդիները բաժանված են հայ և վրաց եկեղեցիների հետևորդների։ XIX դ. նրանց համապատասխանաբար կոչում էին «հայ ուդիներ» և «վրաց ուդիներ», հաճախ նաև «հայեր» և «վրացիներ», ինչպես այդ շատ հստակ երևում է Ա. Արասխանյանցի բնութագրումից։ «Նուխու գավառի հայլուսավորչական բնակչությունը,— գրում է նա,— ծագմամբ, լեզվով և պատմական ճակատագրերով միասեռ չէ։ Գավառի բնիկ հայեր հանդիսանում են ինքնատիպ լեզվով խոսող ուդիները»[1]։ «Նուխու գավառում ուղղափառներ հանդիպում են միայն մեկ գյուղում՝ Վարդաշենում։ Նրանք հայ լուսավորչականների նման պատկանում են ուդիական ցեղին։ Գավառում ուղղափառ ուդիները հայտնի են «գյուրջի», այսինքն վրացի անվամբ։ Խոսում են ուդիերեն և ամեն ինչով նման են հայ լուսավորչականներին, որոնց հետ ապրում են խառը, առանձին թաղամաս չկազմելով»[2]։ «Հայեր» կամ «վրացիներ» էթնանունների կոնկրետ բովանդակությունը հստակեցնելու համար երբեմն օգտագործվում էին «հայ ուդի», «վրաց ուդի», ինչպես նաև «ուդիախոս հայ», «ուդիախոս վրացի» արտահայտությունները։

Գրավոր աղբյուրները և դաշտային ազգագրական նյութերը միանշանակ վկայում են, որ դեռևս XVIII դ. 20-ական թվականներին Շաքիից մինչև Կուտկաշեն ընդգրկող գոտու տեղաբնիկ բնակչության հիմնական մասն ուներ ուդիական էթնիկ ինքնագիտակցություն, խոսում էր ուդիերեն և դավանում քրիստոնեությունը[3]։ Ողջ XVIII դ. ընթացքում նշված գոտում ընթանում էր բռնի մահմեդականացման և թրքալեզվացման քաղաքականություն, ինչն ի վերջո հանգեցրեց այս հինավուրց ժողովրդի պահպանված հատվածի մեծ մասի ապազգայնացմանը։ Սակայն ողջ XIX դ. ընթացքում, ընդհուպ մինչև մեր

---

1 А. Н. Арасханианц, Экономический быт государственных крестьян Нухинского уезда Елисаветпольской губернии (Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. VI, Тифлис, 1887, с. 19).

2 Նույն տեղում, էջ 21։

3 Армяно-русские отношения в VIII в. Документы, Ереван, 1967, с. 90; А. Н. Арасханианц, նշվ. աշխ., էջ 19—20։ Մ. Բարխուտարյանց, Աղուանից երկիր և գրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 239—248, 289—293, Ղազարքահ. Հովսեփյան, Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904։

դարաշրջանի սկիզբը, լեղվափոխ ու դավանափոխ գյուղերի բնակչությունը հստակ հիշում էր իր էթնիկ պատկանելությունը, ինչը մասնավորապես դրսևորվում էր ժողովրդական մեծ ուխտագնացություններ ժամանակ, երբ ուխտավայրերում հավաքվում էին լուսավորչական, ուղղափառ, մահմեդական, ուդիախոս, թրքախոս ուդիները։ Այդպես էր օրինակ, Զատկի երրորդ օրը, երեքշաբթի, երբ բոլոր գյուղերից ուդի ուխտավորները այցելում էին Վարդաշենի «Եղիշ Առաքել» կամ «Քալա Գերգեց» (Մեծ եկեղեցի) կոչվող եկեղեցին՝ հետևելով նախնիներից ավանդված սովորույթին[4]։ Նույն ձևով Զատկին հաջորդող հինգշաբթի օրը այցելում էին Նիժի «Սուրբ Եղիշե» եկեղեցին, իսկ եթե առաջին հինգշաբթին չէր հաջողվում, ապա այցելում էին մինչև Համբարձում՝ որևէ հինգշաբթի[5]։ Եկեղեցիներից այդպիսի համընդհանուր ուխտագնացության վայր էր նաև Ճալեթ գյուղի ս. Աստվածածնի վանքը, որի մոտ գտնվող եկեղեցին ըստ ավանդության առաքելաշեն է, կառուցված Եղիշե առաքյալի ձեռքով[6]։ Նույն դերը բաժին էր ընկել «մահմեդականացած Գիս (Քիշ) գյուղի մոտի ս. Եղիշեի առաքելո վանք[ին]... թե Գիս գյուղի և թե շրջակայքում թրքացած հայերը (ուդիները—Հ. Ա.) շատ երկյուղածությամբ և խորին հարգանքով են վերաբերվում... Տոնի օրը նրանք էլ հայերի (ուդիների—Հ. Ա.) պես ուխտ են գնում և պատկառանքով ներս մտնելով՝ մոմ վառում և ջերմ սրտանց աղոթում են իրենց մտքում։ Մինչև անգամ շատ տեղերում մահմեդականացած հայերը (ուդիները—Հ. Ա.) երդվում են ս. Եղիշեի անունով»[7]։

Հատկանշական է, որ էթնիկ համախմբիչի այդ ֆունկցիան բաժին էր ընկել «Եղիշե առաքյալի» անունը կրող և, ինչպես կտեսնենք, ավանդաբար նրա գործունեության հետ կապվող հոգևոր կենտրոններին։ Մագումով ուդի Ղազար քահանա Հովսեփյանը որոշակիորեն գրում է. «Ուտիացոց երկրի զանազան մասերում թեև կան մի քանի վանքեր ու սրբավայրեր, բայց ամենից շատ հարգվածներն ու սիրվածները սրանք են, որոնց ուխտագնացության օրերը լինում են Զատկից հետո, Հինանց օրերում, երբ ուտիացոց երկրի ամեն ծայրերից խուռն բազմությամբ ուխտ են գնում թե իսկական հայ (ուդի—Հ. Ա.) քրիստոնյաները, և թե հայից (ուդիից—Հ. Ա.) թրքացած մահմեդականները»[8]։ Նոր կառուցված և այլ անուններ կրող եկեղեցիներն այլևս խորթ էին դավանափոխ եղածներին, ինչպես նաև վրացադավան հոգևոր կենտրոնները հավասարապես օտար էին լուսավորչականներին և մահմեդական ուդիներին. դրանք էթնոձիգ գեր չէին կատարում և սահմանափակվում էին իրենց ենթակա ծխերի հոգևոր պետքերին ծառայելով։

Փոխարենը էթնոձիգ մեծ գեր էին կատարում ժողովրդական, ո՛չ օրենտոնական պաշտամունքի բազմաթիվ սրբավայրեր, ինչպես Քոմրադը Միրիկ գյուղի մոտ[9], Թովուղ դռանը Նիժում[10], Զրավարը՝ Վարդաշենում[11], Ալոն և Օկուն ծիմերիները նույն Վարդաշենում[12], Բում գյուղի մոտի սրբավայրը[13]

---

4 М. Бежанов, Краткие сведения о с. Варташен и его жителях [Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև СМОМПК), вып. XIV. Тифлис, 1982], с. 229; Քամալ Սարգիս, Ուտիական Նիժ գյուղի աղաթների, տոների և կենցաղի մասին (Ձեռագիր, Մաշտոցի անվան Մատենադարան, էջ 34)։

5 Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 34։

6 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփխիս, 1842, էջ 377, Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 25։

7 Ղազար քահ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 72։

8 Նույն տեղում, էջ 43։

9 Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 39, 40։

10 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 382, Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 24, Ե. Լալայան, Նիժի և Վարդաշենի ուդիները աղգագրական տեսակետից, Երևան, 1926, էջ 12։

11 Նույն տեղում, էջ 12։

12 М. Бежанов, նշվ. աշխ., էջ 225:

13 Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 36, Շիրվանի, Աղգագրական տեղեկություններ Նիժի ուդիների վերաբերյալ, ձեռագիր, պահվում է ՀԱ ԳԱ հնագ. և աղգ. ինստ. արխիվում։

և այլն։ Սրանց մի մասը ևս, ինչպես կտեսնենք, այս կամ այն չափով ավանդությունները կապում են Եղիշեի անվան հետ։

Մատենագրության մեջ երկար լռությունից հետո՝ XIX դ. կեսերին, Ս. Ջալալյանցն էր, որ դեռևս գոյատևող ավանդությունների հիմամբ անդրադարձավ այս առաքյալի գործունեությանը։ Շրջագայելով Նուխու գավառում և բազմիցս հանդիպելով Եղիշեի հիշատակներին, Ս. Ջալալյանցը տեղում պահպանված ավանդությունների, սրբավայրերի պատմության ու մատենադրական տեղեկությունների համադրմամբ փորձում է ներկայացնել առաքյալի գործունեության շրջանակը։ Այսպես, Զարղունի[14] դաշտակի՝ Զարղուն գյուղի մոտի սրբավայրի մասին, որը Նուխու գավառի ողջ բնիկ բնակչությունը կապում էր նահատակության վայրի հետ, Ս. Ջալալյանցը գրում է. «Եղիշե, աշակերտ Քրիստոսի յետ քարոզելոյ յԱղուանս սկսեալ ի Սահառ քաղաքէ, գուցե այժմ Ջահառ, ե յետ կառուցանելոյ զեկեղեցիս և կարգելոյ զհովիւ ի Դիշ, ի Սահառ, ի Նուխի, ի Ճալեթ, ի Վարդաշեն, ի Նիժ և յայլ տեղիս, կատարի ասո սոսկալի շարշարանօք ընդ երից աշակերտաց իւրոց, այն է ընդ Վլասայ, Քահալցիցիկի և Դիւմրատայի։ Ապա մարմին աշակերտաց գուցե ընտանիք նոցա տարեալ են ի Վարդաշեն և ի Նիժ։ Իսկ մարմին առաքելոյն Եղիշէի արկանի ի խոր գուբ ընդ այլոց մահապարտից, և այժմ գուրբն այն, յորում արկին զմարմին երանելի առաքելոյն, լցեալ կայ գլխովին հողով՝ ունելով սակաւ ինչ խորութիւն, առ որ յաճախեն ուխտաւորք բազումք մեծաւ ջերմեռանդութեամբ և ունին ի պատուի որպէս զառաջին նշան քրիստոնեական գաւուց»[15]։

Հեղինակը նշում է նաև առաքյալի աշակերտների թաղման վայրերը. «ի ներքին կողմն այսր գեղջ (խոսքը Վարդաշենի մասին է—Հ. Ա.) յարեւվելս հարաւոյ ի գլուխ միոյ բլրոյ յեզր անուշահամ վտակ են գերեզմանք երկուց աշակերտացն Եղիշէի, Քահալցիցիկի (Մեծածաղկի) և Դիւմրատայի։ Պատմէն աւանդութեամբ արժանահաւատ ծերունիք Ուտէացւոց ցայսօր ժամանակի, թե՝ աշակերտք էին սոքա առաքելոյն Եղիշէի և ընդ նմա կասարեցան ի դաշտին Զարզունայ, զմարմինս որոց բարձեալ քրիստոնէից ամփոփեցին աստանօր, ուր յորդւոց յորդիս մեծաւ ջերմեռանդութեամբ կատարեմք զյիշատակս նոցա»[16]։

Վարդաշենում է գտնվում Եղիշեի անունը կրող մեծ վանքը, որը, ինչպես ասվեց, հայտնի է նաև «Քալա Գերգեց» (Մեծ եկեղեցի) անվամբ։ Ըստ մինչև այսօր պահպանված ավանդության, վանքը կառուցվել է այն վայրում, ուր ընդհանուր մեծ փոսի մեջ թաղվել են հանուն քրիստոնեական հավատի արաբների դեմ մարտնչած և զոհված ուդիները[17]։ Համանման ավանդություն է դրի առել 1903 թ. Ռաշիդ բեկ էֆենդիևը, սակայն այս տարբերակում նշվում է, որ արաբներից փախչող ուդիներն ասյաստանել են Վարդաշեն գյուղի մոտ գտնվող Եղիշե առաքյալի դամբարանում, որն այն ժամանակ համարվում էր գյավուր-ուդիների տիրապետությունում գտնվող երկրորդ ամրացված կետը[18]։ «Քալա Գերգեց»-ից բացի, Վարդաշենի մեծ գերեզմանատանը գտնվում է մի փոքր եկեղեցի «Կիցկե

---

14 Գտնվում է Նիժից հարավ-արևմուտք, Կուտկաշենի շրջանում։ Այժմ էլ կոչվում է նույն անունով։

15 Ս. Ջ ա լ ա լ ե ա ն ց, նշվ. աշխ., էջ 388—389։

16 Նույն տեղում, էջ 380։ Վարդաշենից արևելք պահպանվել են եկեղեցու ավերակները, որը Վարդաշենցիներին հայտնի է Կալա ցիցիկ (Կաղ ծաղիկ) անունով (М. Б е ж а н о в, նշվ. աշխ., էջ 228)։ Այժմ կղմինդրածածկ տանիքով անշուք, փոքրիկ սրբավայր է։

17 Ուդիների մեջ շատ տարածված են դավանանքի համար արաբների դեմ պայքարելու մասին պատմությունները։

18 Р а ш и д б е к-Э ф е н д и е в. Кабалнинский магал (СМОМПК, вып. 32, Тифлис, 1903, с. 4).

Գերդեց» (Փոքր եկեղեցի) անվամբ, որը հայտնի է նաև «Սերաֆիմի սուրբ»[19] անունով։ Սերաֆիմը, ըստ երկաբնակ ուղիների, Եղիշե առաքյալի կրտսեր եղբայրն էր։ Եկեղեցին պատկանում է վրացադավան ուղիներին։

Եղիշեի մյուս աշակերտի անունն ավանդությունը թաղված է համարում Նիժ գյուղում։ Ս. Ջալալյանցի վկայությունը հետևյալն է. «Յեղբ վտակին, որ անցանէ ընդ մէջ գեղջս, էր դամբարան Վլաս . նահատակի աշակերտի առաքելոյն Եղիշէի, ի վերայ որոյ գոյր փոքրիկ մատուռ զորմէ աւանդութեամբ և եթ գիտելոյն առնէին զուխտաւորութիւն յան որոյ Աստուածատուր քահանայ ազգաւ Ուտի առ ի շինել զհոյակապ եկեղեցի քակեաց զմատուռն զայն մարդաշափ խորութեամբ ուր ունոր հրեշտակ տապանավէմ, ի վերայ որոյ կայր գրեալ. «Վլաս աշակերտ Եղիշէի», ի բառնալ վիմին երևեցան ոսկերք սրբոյն և ի նմին տապանի երեք իաչ. երկուսն պղնձեայ առանց պատվանդանի և մինն երկաթեայ պատուանդանաւ հանդերձ, ապա հանեալ անտի զնշխարս սրբոյն և զերիս խաչս, զնշխարսն դնէ ի ներքոյ սեղանոյն, իսկ զխաչսն զետեղի ի մէջ եկեղեցւոյ...»[20]։ Սակայն եկեղեցին տաս տարի հետո կողոպտում են և թիվս այլոց տանում նաև այդ մասունքները[21]։

Վերոհիշյալ սրբավայրերի գոյության ավանդություններով պարուրված փաստը հաստատվում է հետագա հեղինակների վկայություններով, ինչպես նաև մեր դաշտային նյութերով։ Ղ. Հովսեփյանի հաղորդման համաձայն, «ավանդաբար պատմում են, որ Եղիշե առաքյալն ունեցել է երեք աշակերտներ՝ Վլաս, Քահալցիցիկ և Գոմ-Սուրատ, որոնցից առաջինը նահատակված և թաղված է Նիժ գյուղաքաղաքի ս. Եղիշեի եկեղեցու սեղանի տակ, երկրորդը նահատակվել և թաղվել է Վարդաշեն գյուղաքաղաքի սուրբուտում, իսկ երրորդը նահատակված ու թաղված է մի բարձր լեռան գլխին, որ գտնվում է Ներիկ գյուղի հյուսիսային արևմտյան կողմը։ Ս. Եղիշե առաքյալին անօրեն լեռնականները նահատակել և ձգել են մահապարտների համար հատկացված այն հորի մեջ, որ այժմ գտնվում է հայից թրքացած Բում գյուղի հյուսիսային կողմը թեքված Կոլկասյան լեռնաշղթայի վրա»[22]։

Ուդիական կենցաղին քաջածանոթ Քամալ Սարգիսը նկարագրում է Ջատկին հաջորդող հինգշաբթի օրվա տոնը, երբ շրջակա «բոլոր հայ գեղերից (ուդիական—Հ. Ա.) գնում էին Նիժի սուրբ Եղիշե, որտեղ ամփոփված էին սուրբ Վլասի նշխարները... Եկեղեցի մտնողը համբուրում էր ս. Վլասի գերեզմանոցը, մոտը գնում կարմիր ձու ու մոնրադրամ...»[23]։ Նույն հեղինակի վկայությամբ, «մի մատուռ էլ կար Եղիշե առաքյալ անունով, որ գտնվում էր Բում գյուղի վերևը... այստեղ էր... Եղիշե առաքյալի նահատակության վայրը։ Այժմյան թուրքաբնակ Զարսլան գյուղը նահատակության տեղից հեռու էր 10—12 վերստով»[24]։

Նիժի Եղիշեի եկեղեցու մասին գրում է նաև Ե. Լալայանը. «Դարամահլում[25] գտնվում է Եղիշեի եկեղեցին, որ շինել է Աստվածատուր քահանա Ճոտանյանը[26] յուր միջոցներով։ Ջատկի հինգշաբթի օրը ոչ միայն Նիժեցիները, այլև վաբդաշենցիներն ու շրջակա գյուղացիները ուխտ են

---

19 Այն հաղորդվում սրբավայրերից է, որ համարյա այցելուներ չունի։

20 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 381—382։

21 Նույն տեղում։

22 Ղ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 42։ Այս վերջինը Զարզուլի դաշտակում Ջալալյանցի հիշատակած սրբավայրն է։

23 Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 34։

24 Նույն տեղում, էջ 36։

25 Թաղամաս Նիժում։

26 Ճոտանյան ազգանունից այս եկեղեցին կոչվում է նաև Ջոտարի քիլիսա։

պալիս այս եկեղեցին։ Եկեղեցու տեղում հնումը մի փոքրիկ ուխտատեղի է եղել Վլասի (Եղիշե առաքյալի աշակերտի) գերեզմանի վրա»[27]։

Ի թիվս Եղիշե առաքյալի անվան հետ կապված այլ սրբավայրերի, Ռալեթի վանքը ևս մեծ մասսայականություն ուներ Նուխու դավառի ողջ բնակչության մեջ, ուր «Հատիկից հետո հինանց օրերում Ուտիացոց երկրի ամեն ծայրերից խուռն բազմությամբ ուխտ են գնում՝ թե իսկական հայ (ուդի—Հ. Ա.) քրիստոնյաները և թե հայից թրքացած մահմեդականները»[28]։ Ռալեթի ս. Աստվածածնի եկեղեցին նույնպես, Ս. Ջալալյանցի կարծիքով, առաքելաշեն է, որը հավաստելու համար հեղինակը բերում է ինչ որ ձեռագրի վկայություն. «Եւ ընդ շնորհաղեղուն թղթոցս ծանուցումն լիցի օրհնեալ երկրներացդ,— հաղորդում է ձեռագիրը,— Շաքու, Ղապալու, Արաշլասանու, Աղդալու, որք են թէմի և վիճակ սուրբ Ռալէթի վանք Աստուածածնի աթոռոյն, և ի միջի լուցին եղեալ ամենայն ժողովրդոց՝ մեծաց և փոքունց, զի ի բնէ անտի շինեցաւ աթոռն այն սուրբ հրամանաւ Եղիշեի առաքելոյն ... որ եկեալ յայդ երկիրսդ քարոզեալ ձեզ զբանն կենաց և լուսաւորեաց փարատելով ի հոգւոց ձերոց զմութն և զխաւարն հրապարշտութեան հաւատով աստուածագիտութեան և կառոյց յերկիրդ այդոսիկ զեկեղեցիս և կարգեաց առաջնորդ և հովիւս առ ի հովուել զերկիրսդ, [illegible] կառուցելոց եկեղեցեաց մինն է Ռալէթի վանք սուրբ Աստուածածնի, զոր կառուցն և էած ձեռամբ իւրով...»[29].

XIX դ. արդեն ավերման եզրին էր մահմեդականացած Գիս գյուղի առաքելաշեն համարվող ավազաղույն եկեղեցին՝ «Եղիշէ առաքյալի վանքը։ Հովսեփյան քահանայի վկայությամբ, այն հնագույնն է համարվում «Ուտիայոց աշխարհում գոյություն ունեցող բոլոր վանքերի և սրբավայրերի շարքում...»[30]). «Թուրքերն (մահմեդականացած ուդիները—Հ. Ա.) անվանում են այս վանքին «քեօհնեայ օջաղ»— հին ուխտատեղի և հայոց (ուդիների—Հ. Ա.) պես երկյուղածությամբ սիրում են նրան ու պաշտում»[31]։ Հղինակի վկայությամբ, վանքին հարող Գիս գյուղը սարսափելի բռնություններով մահմեդականացվել է XVIII դ. վերջում, թուրքական արտասանությամբ Գիս անունը փոխվել է Քիշի, իսկ Եղիշե առաքյալի անունն էլ՝ Եաղիշ կամ Եախշի Առաքել[32]։

Եղիշե առաքյալի՝ Ս. Ջալալյանցի և Ղ. Հովսեփյանի հիշատակած երրորդ աշակերտի՝ Գոյմուրադի անվան հետ կապվող սրբավայրի շուրջ եղած ավանդությունները տարբեր են։ Դրանք հաստատում են, որ Գոյմուրադ բառը Մուրադ անունից է, վերջինս, ըստ ավանդության, արաբների առաջնորդ Ալիի և Կաբալայի թագավոր Սալսալի դստեր որդին է՝ զոհված հոր ձեռքով[33]։ Քամալ Սարգսի վկայությամբ, այս սրբավայրի տեղը հին շինության՝ մատուռի մնացորդներ կային։ Մատուռը կործանել է վերոհիշյալ արաբ Ալին։ Մատուռի մոտի հին գերեզմանատանը գտնվող երկարավուն գերեզմանաքարը պաշտվում էր շրջակա բոլոր ուդիների կողմից[34]։ Այս սրբավայր այցելելու գլխավոր օրը Կրկնազատիկն էր (Կանաչ կիրակին), երբ հավաքվում էին բոլոր՝ հայադավան, վրացադավան, մահմեդական, թրքախոս, ուդիախոս ուդիները[35]։

Եղիշեի անվան հետ կապվող սրբավայրերի վերաբերյալ տեղեկու-

27 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 4։
28 Ղ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 43։
29 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 369—370։
30 Ղ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 40։
31 Նույն տեղում։
32 Նույն տեղում։
33 Рашид бек-Эфендиев, նշվ. աշխ., էջ 8—9:
34 Քամալ Սարգիս, նշվ. աշխ., էջ 40։
35 Նույն տեղում, էջ 36։

թյուններ է հաղորդում նաև Մ. Բարխուտարյանցը, որոնք, ըստ էության, դուրս չեն գալիս մեզ արդեն հայտնի սահմաններից։ Այսպես, ըստ «Աղուանից երկիր և դրացիք» աշխատության հեղինակի, Զարղունի գաշտի Բում գյուղի Եղիշ Առաքել մեզ հայտնի սրբավայրը «մահապարտների այն հորն է, որի մեջ ձգած են չարագործները Եղիշե առաքյալի սուրբ մարմինը նահատակվելուց հետո»[36]։ Մ. Բարխուտարյանցը նույնպես հաստատում է, որ Եղիշեի աշակերտ Վլասի դամբարանը գտնվում է Նիժում, նակայն, ըստ նրան հասած ավանդության տարբերակի, Վլասը նահատակվել է Կաբալայի մոտ՝ «Կեսուր ղալա» կոչվող վայրում[37]։ Այս «Կեսուր ղալան» արձագանքվում է Եղիշեի մյուս աշակերտի հետ կապվող սրբավայրի՝ Գոյմուրադի (Մուրադի) հետ կապվող պատմություններում, ըստ որոնց, Մուրադի պապը՝ արաբներին դիմադրող Սալսալ թագավորը, ամրացել էր հենց «գյաուր ղալասի» ամրոցում[38]։

Եթե ամփոփենք XIX—XX դդ. սկզբի հեղինակների տեղեկությունները, ապա կունենանք դեպքերի ընթացքի հետևյալ պատկերը. Եղիշեն երեք աշակերտների՝ Վլասի, Քահալցիցիկի և Գոյմուրադի (ըստ Ղ. Հովսեփյանի՝ Գոմմուրագի, ըստ Ս. Ջալալյանցի՝ Գյումրատայի) հետ քրիստոնեություն էր քարոզում XIX դ. Նուխի և Ղաբալա անուններով հայտնի գավառներում (պատմական Շաքիի և Կապաղակի)։ Գիսում, Նուխիում, Ճալեթում, Վարդաշենում, Նիժում և այլուր եկեղեցիներ կառուցելուց ու քահանաներ կարգելուց հետո, իր աշակերտներով Զարղունի գաշտակով անցնելիս, Զարղուն գյուղի մոտ, Բումից ոչ հեռու (երկու գյուղերն էլ գտնվում էին նախկին Ղաբալայի գավառում, այժմ Ադրբեջանի Հանրապետության Կուտկաշենի շրջանում), Եղիշեն զոհվում է անհավատների ձեռքով։ Աշակերտների մարմինները հարազատները տանում են, իսկ առաքյալի մարմինը գցում են մի փոսի մեջ, «առ որ յաճախեն ուխտաւորք բաղում մեծաւ ջերմեռանդութեամբ»[39]։ Քահալցիցիկը և Գյումրատան, ըստ Ս. Ջալալյանցի, թաղված են Վարդաշենում, իսկ ըստ Ղ. Հովսեփյանի և Քամալ Սարգսի վկայության, Գոյմուրադը թաղված է Ծերիկ գյուղի մոտ։ Երրորդ աշակերտի՝ Վլասի դամբարանը գտնվում է Նիժ գյուղում։

Հիշատակված բոլոր սրբավայրերը մեծ ժողովրդականություն են վայելում ուդիների մեջ, իսկ Գիս գյուղի Եղիշե առաքյալի վանքը, ինչպես ասվեց, հնագույնն է համարվում «Ուտիացոց աշխարհում գոյություն ունեցող բոլոր վանքերի և սրբավայրերի շարքում... անվանում են այս վանքը «քեսհնայ օջաղ»[40]։ Նյութերը ցույց են տալիս, որ այս սրբավայրերին նվիրված ուխտագնացության օրերը դուրս են գալիս քրիստոնեական ծեսի շրջանակներից՝ հանդիսանալով ավանդական ժողովրդական հավաքների էթնիկ դրսևորում ուդիական էթնիկ ինքնագիտակցությունը քիչ թե շատ պահպանած բոլոր ուդիների համար։

Եղիշե առաքյալի անվան հետ կապված զրույցներն ուդիների մեջ պահպանվել են մինչև այսօր։ Նիժ գյուղում 1986 թ. գրի ենք առել ավանդության ևս մի տարբերակ, որում որոշակիորեն նշվում է առաքյալի էթնիկ պատկանելությունը։ Եղիշեն ծագումով ուդի է. ուսուցված նրան սովորեցրել է ճիշտ հավատը, նա էլ սովորեցնելիս է եղել ուդիներին։ Իր կյանքի վերջին հինգ տարիներին առաքյալն ապրելիս է եղել Բում գյուղում, որտեղ նրան անհավատները վիրավորել են։ Եղիշեն բարձրացել է գյուղի մոտի սարը, այնտեղ մի տնակ է կառուցել, ապա մահացել է։ Տնակի (մատուռ) ավերակները պահպանվել են մինչև այսօր։ Այդ վայրը դարձել է սրբատեղի և հայտնի է Եղիշ Առաքել անունով։ Սրբի մարմինը հավատացյալները տարել են Նիժ և դրել

36 Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 256։
37 Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 254։
38 Рашид-бек-Эфендиев, նշվ. աշխ., էջ 8։
39 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 389։
40 Ղ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 42։

այժմ Ջոտարի քիլիսա կոչվող եկեղեցու տեղը գտնվող հին մատուռում։ Գիշերն առաքյալի հետևորդները դիակը գողացել են և տարել թաղել իրենց եկեղեցում, որը հետագայում կոչվել է Եղիշ Առաքել։ Իսկ թե որտեղ է այս Եղիշ Առաքել Եկեղեցին՝ չգիտեն։

Ուդիների մեջ Եղիշեի մասին դոյատևող պատմությունները որոշակիորեն XIX դ. գրավոր ավանդության հետևանքը չեն։ Նախ, գրավոր տեղեկություններից վերը բերված քաղվածքների միջև եղած տարբերությունները ցույց են տալիս, որ դրանք մեկը մյուսի համար աղբյուր ծառայել չէին կարող. յուրաքանչյուր հեղինակ հաղորդում է առաքյալի գործունեության մի մասնակի կամ նրա անվան հետ կապվող սրբավայրի մի ավանդություն։ Ընդորում, դրանք միշտ չէ, որ նույնական են։ Ճիշտ է, Ս. Ջալալյանցը և Մ. Բարխուտարյանցը իրենց տեղեկությունները փորձում են հիմնավորել մատենագրական աղբյուրով՝ Մ. Կաղանկատվացու վկայություններով, սակայն նրանց հաղորդած նյութն անհամեմատ ծավալուն է և, զլխավորը, կապված է XIX դ. ուդիական իրականության հետ։ Ուստի և կասկածից վեր է, որ այդ տեղեկությունների աղբյուրը նույնպես շրջատարածքում շրջող բանավոր զրույցներն են։ Ավանդության մեր դրվ առած տարբերակը նույնպես տարբերվում է XIX դ. գրավոր բոլոր տեղեկություններից և ժողովրդական բանահյուսական նյութի գրանցում է։

Այս հանգամանքը լավագույնս հաստատվում է այն փաստով, որ XVIII դ. մի փաստաթղթի վկայությամբ ուդիները Եղիշեին համարում էին քրիստոնեության իրենց քարոզիչը և նրա գործունեության հետքերն իրենց բնակության վայրերում էին տեսնում շատ ավելի վաղ, քան գրի են առնվել վերոհիշյալ տեղեկությունները։ Խոսքը Պետրոս Մեծին 1724 թ. ուդիների ուղարկած խնդրագրի մասին է, որտեղ, մահմեդականների բռնությունների դեմ բողոքելով, նրանք մասնավորապես գրում են. «Մեք աղուվանք եմք և ազգով ուտիք, Եղիշէի առաքելոյն քարոզութեամբն մեր նախնիք Աստուած հաւատացեալք են. սուրբ առաքելոյն նահատակութեան տեղիքն առ մեզ է։ Քո հրամանոդ հայտնի է, որ յառաջմէ մեր ազգին իշխանութիւն ոչ կայր, որ առաքելոցն նահատակութեան տեղն փառավոր վանք շինէին, միայն թէ մեր նախնիքն մին փոքր եկեղեցի շինեալ էին, մեք նովաւ կեանք էինք անցուցանում։ Այժմս անօրենք այրեցին, և մեզ զօրով ուրացուցին։ Ծածուկ մեր օրենքն պահում ենք...»[41]։ Այս փաստաթուղթը ոչ միայն անուղղակի վկայում է, որ ուդիների մեջ գոյատևող ավանդազրույցը պայմանավորված չէ XIX դ. գրավոր ավանդությամբ և, ընդհակառակն, ինքն է աղբյուր ծառայել վերջինիս համար, այլև ցույց է տալիս, որ ազգային իշխանությունից զուրկ ուդիների համար ազգային ինքնահաստատման և էթնիկ միասնության դրսևորման միջոցը Եղիշեին իրենց՝ ուդիների քարոզիչը համարելու միտումն էր։ Ուստի զարմանալի չէ, որ թագավորին ուղղված դիմումի գլխավոր խնդրանքը Եղիշեին նվիրված կենտրոնի վերակառուցման օժանդակությունն է։ «Մեր խնդիրքն այս է,— գրում են ուդիները,— որ մին քանի պետքական մեծիդ ծառայք (որ) կայ(ր) տեղիս, այդ մարդոց հետ խորհուրդ արել ենք, զուլուղդ ուղարկել, որ Սուրբ Եղիշէ առաքելոյն համար մին փոքր ուրախութեան գիր շաղավաթ անես դոցա ձեռօքն տեղիս տառապելոցն իբր եկեղեցոյ տեղն հրամանոց դոլվաթիցն վանք լինի ժամանակով»[42]։

Այսպիսով, XVIII—XIX դդ. նյութերի համաձայն Նուխի և Ղարալա գավառներում ապրող ուդիների կյանքում շոշափելի դեր էին խաղում Եղիշե առաքյալի անվան հետ կապված սրբավայրերը. պահպանված ավանդազրույցները քարոզչի գործունեությունն անուղղակի կապում էին շրջատարածքի

---

41 Ա. Աբրահամյան, Ուդիների դիմումը Պետրոս 1-ին (Էջմիածին, 1952, ապրիլ, էջ 39)։

42 Նույն տեղում, էջ 40։

ի հետ, իսկ գրի առնված ավանդությունների պատառիկներում հիշատակվող գործունեության տարբեր փուլերի տեղավայրերը համապատասխանում են։

Այժմ անդրադառնանք Եղիշեի գործունեության շրջանակների վերաբերյալ մատենագրական տեղեկություններին։ Եղիշեի անվան առաջին հիշատակությանը հանդիպում ենք Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ։ Եղիշեն, Երուսաղեմում սուրբ Հակոբից ձեռնադրվելով, Պարսկաստանի վրայով մտնում է մաղբուքների երկիրը՝ խույս տալով Հայաստանից։ «Սկիզբն առնէ քարոզութեան ի Զողայ և ի տեղիս տեղիս բաղումս աշակերտեալ ծանոյց պփրկութիւնն,— հաղորդում է աղբյուրի հեղինակը։ Անտի եկեալ յՈւտի գաւառ՝ ի Սահառն քաղաք երիւք արամբք աշակերտելովք, որոց հարազատք անօրէնք ոմանք գկնի եկեալ՝ մի յաշակերտելոցն ընկալաւ ի նոցանէ գնահատակութեան վախճան։ Եւ երկուցն թողեալ ղերանելին Եղիշայ գնացին ամբարիշտ և խողխոջիչ արանցն։ Իսկ սուրբ հայրապետն եկեալ է Գիս՝ կանգնեաց եկեղեցի և մատոյց զանարիւն պատարագ։ Հայսմ տեղւոջ եղև սկիզբն արևելեայցս մայրաքաղաքայ և լուսավորութեան տեղի։ Եւ անտի անցեալ ընդ դաշտակն Զերգունի ի տեղի գոհարանի դիւցամոլ կռապաշտիցն։ Եւ անյայտ իմն է, թթե յորմէ իմեմնէ եղև ելք իրացն. և սնդէն ի դուբ մի մահապարտաց ընկեցաւ պատուական նշխարքն և ծածկեցաւ ի տեղւոջն, որ կոչի Հոմենք, բաղում ժամանակս»[43]։ Պատմիչն այնուհետև հաղորդում է, թե ինչպես շատ ժամանակ հետո, Ուռեկան դյուղից ջերմեռանդ հավատացյալ ոմն քահանա, Ստեփանոս անունով, փախցնում է առաքյալի դանգը, տանում թաղում Ուռեկանում։ Հետագայում Ուռեկան են տարվում նաև սուրբ Եղիշեի մյուս նշխարքները և թաղվում նույն տեղում։ «Եւ ապա անտի փոխեցին ի Ներսմիհրայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ ի փառս տեառն Աստուծոյ ամենակալի։ Իսկ յետ բաղում ժամանակաց բարեպաշտ Վաչագան՝ Աղուանից արքայ, կանգնեաց սիւն ի գրի նահատակութեանն Եղիշայի»[44]։ Այս է ամենը, ինչ հաղորդում է VII դարի պատմիչը։

Եղիշե առաքյալի վերաբերյալ տեղեկություններ տվող մյուս աղբյուրները «Յայսմավուրք» ժողովածուներն են։ Գր. Խլաթեցու խմբագրած «Յայսմավուրքը» հաղորդում է. «Եւ յետ կատարման առաքելոյն՝ գնաց Եղիշէ յԵրուսաղեմ. և անդ ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի Յակոբայ տեառն Եղբօրէն։ Եւ անտի դարձեալ եկն յարևելս. սկիզբն արարեալ քարոզութեան իւրոյ, ի Զօլայ և ի բաղում տեղիս քարոզեաց զքրիստոնեութիւնս։ Ի Քրդստան, ի Հայաստան. ի Պարսկաստան. և գնացեալ եհաս յաշխարհն Աղուանից՝ յՈւտ գաւառ, ի քաղաքն Սահառ, զ աշակերտօքն։ Որոց զհետ եկեալ ազգականքն. զմինն սպանին վասն ի քրիստոնեական հաւատոցն. և երկուքն դարձան զհետ ազգականաց իւրեանց։ Եւ սուրբն Եղիշէ գնաց ի դիւղն որ կոչի Գիս. և անդ դարձոյց զբազումս ի հաւատս Քրիստոսի։ Եւ մկրտեալ զամենեսեան հազորդեաց մարմնոյ և արեանն Քրիստոսի։ Շինեաց եկեղեցիս և կարգեց քահանայս։ Եւ անցեալ՝ ի դաշտակն Զարդունի ի տեղիս կռոցն, անդ կատարեցաւ քարակոծեալ յանօրինացն։ Եւ ընկեցին զնա ի դուբ մի ևս անյայտ արարին։ Եւ յետ բազում ժամանակաց երևեալ սուրբն Եղիշէ արանց աստվածապաշտից որ գնացեալ հանին զնա անտի. և ոչ գիտէին զնա թէ ով ոք իցէ։ Մինչ որ ինքն դարձեալ երևեցաւ և ասաց՝ թէ ես եմ առաքեալն Եղիշէ աշակերտ մեծին Թադէոսի առաքելոյն։ Եւ բարձեալ տարին զնա ի դիւղն Ուռեկան. և անդ հանգուցին մեծաւ պատուով։ Եւ հետոյ տարան ի վանքն որ կոչի Ջրվշտիկ և անդ եդին փառաւորապես։ Յորմէ բաղում սքանչելիք լինին ի հիւանդս և յախտաժէտս։ Եւ հետոյ բարեպաշտ արքայն Աղուանից Վաչագան, սիւն մեծ կանգնեաց ի վերա դրին»[45]։

---

43 Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 10—11։

44 Նույն տեղում, էջ 11—12։

45 Յայսմաւուրք (Գր. Խլաթեցու խմբ.), Կ. Պոլիս, 1730, էջ ՁԲ—ՁԳ։

Այսպիսով, առկա է մատենագրական տեղեկությունների և ուշ շրջանի ժողովրդական ավանդապատումների ատաղձի նույնությունը։ Եղիշեն երեք աշակերտների հետ գալիս է «Ուտի դավառ» (Նոր տարբերակում՝ ուտիացոց աշխարհ), աշակերտները (Նախնական տարբերակում՝ նրանցից մեկը) զոհվում են, առաքյալը Գիսում կառուցում է առաջին եկեղեցին (որը, ի դեպ, կոչվում է հին— «քեօհնա օջաղ»), նահատակվում է Զարղունի դաշտում, որտեղից հետագայում ղողանում են նրա մասունքները (Նոր տարբերակում՝ դիակը)։ Ավանդության մատենագրական տարբերակի համաձայն առաքյալի ոսկորները նախ տանում են Ուռհկան, ապա՝ Ջրվշտիկ (որը հետագայում վերանվանվում է «Եղիշե առաքյալի» վանք), իսկ ըստ ավանդության նոր տարբերակի, դիակը բերում են նախ Նիժի մատուռը, որտեղից էլ նրա հետևորդները դողանում են և թաղում Նիժի այսօրվա բնակիչներին անհայտ մի վայրում, որ դարձյալ կոչվում է «Եղիշ Առաքել»։ Ինչպես տեսնում ենք, կրկնվում են ոչ միայն դեպքերի սխեմատիկ ընթացքը և հաջորդականությունը, այլև տեղանունները.

Մ. Կաղանկատվացի

Ուտի գավառ, ուր կան

Սահառան քաղաք-նահատակվեց աշակերտներից մեկը

Զերգունի դաշտակ, որտեղ էլ «զոհարան դիւցամոլ կռապաշտիցըն» զոհվեց առաքյալը

Հոմենք-մահապարտների գուբը. այստեղ գցեցին քարոզչի մարմինը

Հայսմավուրք

Ուտ գավառ, ուր կան

Սահառ քաղաք,—սպանվեց աշակերտներից մեկը

Զարղունի դաշտակ «ի տեղիս կըռոցն» զոհվեց առաքյալը
Մի գուբ, ուր գցեցին քարոզչի մարմինը

XIX դ. տարբերակ

Ուտիացոց աշխարհ, որ կան

—

Զարղունի դաշտ՝ Զարղուն գյուղով, զոհվեց առաքյալը։ Մինչև այսօր պահպանվել է նախաքրիստոնեական սրբավայրը
Փոս, որը կապվում է նահատակության վայրի հետ և Եղիշեի անվան հետ կապվող գլխավոր սրբավայրերից մեկն է

Առկա տեղանուններից որոշակիորեն գիտենք Գիսի և Զերգուն-Զարղունի դաշտակի տեղը։ Վերջինս գտնվում է այժմյան Ադրբեջանի Հանրապետության Կուտկաշենի շրջանում, Նիժ գյուղից անմիջապես հարավ-արևմուտք, պատմական Աղվանքի երբեմնի մայրաքաղաք Կապաղակից ոչ հեռու։ Ինչ վերաբերում է Գիսին, ապա մինչև վերջերս անվիճելի էր համարվում, որ այն համապատասխանում է Շաքիից հյուսիս գտնվող Քիշ-Գիս գյուղին։ Բագրատ Ուլուբաբյանը կասկածի տակ է դրել այդ իրավացի կարծիքը, այն համարելով Գիս-Գիշ-Քիշ անունների պատահական նմանության արդյունք[46]։ Նախ ասենք, որ ի տարբերություն բանավոր խոսքի, գրավոր ավանդույթը Շաքիից հյուսիս գտնվող «Գիս» բնակավայրի և վանքի անունը պահել է անաղարտ «Գիս» ձևով։ Այդ հանգամանքը հետազոտողների (Ս. Ջալալյանց, Մ. Բարխուտարյանց, Ղ. Հովսեփյան և ուրիշներ) աշխատանքներից զատ լավագույնս երևում է Ղարաբաղի թեմի առաջնորդի և էջմիածնի հոգևոր կառավարության

46 Բ. Ուլուբաբյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ (Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 1, էջ 177)։

գրագրությունից։ Ղարաբաղի թեմի առաջնորդը 1875 թ. միջնորդում է Էջմիածնի հոգևոր կառավարության առջև՝ Նուխու հոգևոր վարչությունը Գիսի վանք տեղափոխելու համար։ Ե՛վ դիմումի, և՛ պատասխանի մեջ վանքի «Գիս» անունը պահպանված է անաղարտ. «Վերագարձեալ եմ ի սուրբ Աթոռոյդ ի Նուխի քաղաք նկատեալ տեսի, զի վանքն Գիսու կարի մերձավոր գոլով ի նմին քաղաքի իբրև մի վերստաչափ հեռավորութեան, ուր յաճախին ուխտաւորք բազումք...» «Հոգևոր կառավարությունն հայոց Նուխւոյ ի վանս Գիսու դատի անյարմար որպես ըստ հեռավորութիւն ի քաղաքեն...»[47]։

Այժմ անդրադառնանք Գիսի տեղադրության վերաբերյալ մատենագրական աղբյուրներին։ Ուշադրություն է գրավում Մ. Կաղանկատվացու հաղորդած տվանդության մի արտահայտությունը. «Իսկ սուրբ հայրապետն եկեալ ի Գիս՝ կանգնեաց եկեղեցի և մատոյց զանարիւն պատարագ։ Յայսմ տեղւոջ եղև սկիզբն արևելեայցս եկեղեցեայս մայրաքաղաքայ և լուսավորութեան տեղի»[48]։ Այսինքն՝ սկզբնապես այստեղ էր արևելյան (Աղվանից) եկեղեցու մայրաքաղաքը (հոգևոր կենտրոնը, նստավայրը)։ Ա. Հակոբյանը իրավացիորեն նշում է, որ «միջնադարյան չգրված կանոնի համաձայն հոգևոր իշխանությունը պիտի լիներ վարչական կամ քաղաքական իշխանության կողքին»[49] և նյութերի քննությամբ ցույց է տալիս, որ Աղվանից կաթողիկոսության նախնական, մինչմարզպանական փուլի նստավայրը պիտի լիներ բուն Աղվանքի տարածքում[50]։ Նա ենթադրում է որպես հոգևոր կենտրոն տեսնել թագավորանիստը՝ Կապաղակը, սակայն աղբյուրն անբեկիր մատնանշում է այդ կաթողիկոսանիստը՝ Գիսը։ Այն գտնվում է նախամարզպանական Աղվանքի տարածքում և հեռու չէ վարչական կենտրոնից։

Գիսի վերաբերյալ Մ. Կաղանկատվացու մյուս վկայությունները նույնպես չեն հակասում, ավելին՝ հաստատում են այս տեղադրությունը։ Այսպես, պատմելով Աղվանքում Մ. Մաշտոցի գործունեության մասին, նա հաղորդում է. «Անցանելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ հասանել ի սահմանս արեվելից՝ ի գաւառն Ուտիական։ Եւ մտեալ բնակէին ի ճախճախուտ տեղիս և ի լուռաբոյս մօրսն՝ առ տեղեաւն, որում Գիսն կոչեն։ Եւ յայնժամ նորոգեալ զեկեղեցւոյ հաստատէ զհաւատս։ Եւ ձգէր քարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱռանս, և Լփինս, և ի Կասպս, և մինչև ի դուռն Չողայ և զայլազգի ազգսն, զոր գերութեամբն էր ածեալ Ազեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կաւկասու... Բոլորովին քարող և առաքեալ խուժադուժ Սարոստանեացն[51] լինելով՝ ըստ նոցին բարբառոյ դպրութեանն առնէր զնոսա ծանօթս»[52]։ Այս նույն Գիսում Մ. Մաշտոցը թաղում է աստվածային մասունքը՝ Տիրոջ խաչի մասնիկը անհավատներից թաքցնելու համար, որի վրա հետագայում կառուցվում է «եկեղեցի Աստուծոյ ի կայարանի խաչին, զոր Հին եկեղեցի տեղւոյն անուանէին, որում Գիսն կոչեն»[53]։

Անդրադառնալով միայն Գիսի տեղադրության խնդրին, նկատենք, որ ըստ Մ. Կաղանկատվացու, Մ. Մաշտոցը այստեղից է քրիստոնեությունը

---

47 Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, Ֆ. 56, ց. 1, 6569, թ. 1,2։

48 Մ. Կաղանկատուացի, էջ 11։

49 А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 133.

50 Նույն տեղում։

51 «Նոր հայկազյան բառարանը» «այս բառը թարգմանում է «լեռնականք, բնակիչք Կովկասու» (հ. Զ, էջ 70)։ Հ. Աճառյանը՝ «լեռնաբնակք» (Հայերեն արմատական բառարան, հ. 8, էջ 570)։ Շ. Սմբատյանը գտնում է, որ պետք է լիներ «սարոտնեայցն», ինչ պիտի նշանակեր լեռան փնջի, լեռան-սարի ուսի բնակիչներ (Շավարշ Սմբատյան, Եղե՞լ է արդյոք «սարոստանեացն» («սարոստանիք») կամ «սարոստաններ» ցեղ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 3, էջ 79—84)։

52 Մ. Կաղանկատուացի, էջ 95։

53 Նույն տեղում, էջ 97։

վերահաստատում «Աղուանս, և Լփինս, և ի Կասպս» և Կովկաս մեծ լեռան ստորոտի այլազգիների մեջ, այստեղից է «Մարոստաններին» դպրություն սովորեցնում, իսկ աշխարհագրական այդպիսի շրջանակներում գործելու համար Կովկասյան լեռնաշղթայի ստորոտում գտնվող Գիսն ավելի քան նպատակահարմար վայր էր։ Ուշագրավ է, որ հենց այս Գիսում են կառուցում այն եկեղեցին, «զոր Հին եկեղեցի տեղւոյն անուանեին». այս եկեղեցին ձեռադրում երկու անգամ նույնպես անվանվում է «հին եկեղեցի»՝ ոչնչված խաչի կտորների գյուտի կապակցությամբ. «հասանէր ի նախասացեալ վայրն՝ ի հինն եկեղեցի»[54] և «Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին, որ էր ի եկեղեցւոջ անդ, ծագումն խաչին»[55]։ Անշուշտ, այս անունն է արտացոլված Գիսի վանքի ուշ շրջանի «Քեօհնա օջաղ» անվան մեջ։

Բուն Աղվանքի տարածքում Մ. Մաշտոցի լինելու փաստը հայտնի էր մինչև Մ. Կաղանկատվացուն։ «Եվ ապա չետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից և երթեալ իջանէր յաշխարհն և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում Արսվղան էր անուն...»[56], և հենց այստեղից է, որ նա ավետարանի խոսքը տարածում է «վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից»[57]։

Մ. Մաշտոցն Աղվանքում «թագաւորական տեղիսն» կարող էր լինել միայն ու միայն կապաղակյան շրջանում և Կապաղակի մոտերքում, այսինքն Մ. Մաշտոցի գործունեության համար որպես ելակետ Մ. Կաղանկատվացու նշած Գիտը դարձյալ բուն Աղվանքի տարածքում, այսինքն՝ Կուրի ձախափնյակում պիտի լիներ։ Ինչ վերաբերում է Մ. Մաշտոցի գործունեության վերաբերյալ VII դ. հեղինակի հավելմանը, ապա դրա առաջացման տրամաբանական անհրաժեշտությանը կանդրադառնանք ստորև։

Այսպիսով, Մ. Կաղանկատվացու և Հայսմավուրքի հիշատակած Գիս-Գիտը և XIX դ. ավանդությունների Գիսը նույն բնակավայրն են և տեղադրվում են Շաքիից հյուսիս։

Անհայտ է մնում Սահառնի և Հոմենքի տեղադրությունը։ Ավանդության նախնական, Մ. Կաղանկատվացու տարբերակում Հոմենքը Ջերգունի դաշտակում է՝ «ի տեղի զոհարանի դիւացամոլ կռապաշտիցն»[58]։ Հայսմավուրքում Հոմենքը չի հիշատակվում, բայց նահատակության վայրը նույնն է՝ «ի դաշտի Զարղունի ի տեղւոյն կոչեցն»[59]։ Մ. Բարխուտարյանցը կարծում է, որ Հոմենքը Զարղունի դաշտի մոտի Բում գյուղից վերև, լեռնաբաղկի վրա գտնվող մեհյանը պիտի լինի[60]։ XIX—XX դդ. բոլոր ուղիները երիյուղածությամբ էին վերաբերվում Զարղունի դաշտի մոտ գտնվող Եղիշե Առաքել սրբավայրին և այն համարում էին քարոզչի նահատակության վայրը։

Քրիստոնեության առաջին քարոզիչների նահատակության վայրերը և առաջին եկեղեցիների կառուցման տեղերը սովորաբար համապատասխանում են հեթանոսական մեհյաններին, պաշտամունքային հին օջախներին։ Ստրաբոնը, պատմելով հեթանոս աղվանների աստվածների մասին, հայտնում է գլխավոր աստվածության՝ Լուսնի պաշտամունքին նվիրված մեհյանի տեղը, որը ըստ երևույթին պաշտամունքի կենտրոնն էր. այն դրտ-

---

54 Նույն տեղում, էջ 215։

55 Նույն տեղում, էջ 218։

56 Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան Սրբոյն Մեսրոպայ վարդապետի, Թիֆլիս, 1913, էջ 27—28։

57 Նույն տեղում, էջ 28։

58 Մ. Կաղանկատվացի, էջ 11։

59 Հայսմավուրք, էջ 28։

60 Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 80—81։

նրվում էր «Իբերիայից ոչ հեռու»[61]։ Ա. Կրիմսկու ենթադրությամբ այդ տաճարը պետք է փնտրել Շաքիի մոտ[62]։

Զարդունի դաշտը «Իբերիայից ոչ հեռու» է և միանգամայն հնարավոր է, գլխավոր մեհյանի այստեղ գտնվելը, մանավանդ որ այն շատ մոտ է հեթանոսական Աղվանքի գլխավոր քաղաք Կապաղակին (հողոր և վարչական կենտրոնների մերձավորության սովորության իրավունքով)։ Բոլոր դեպքերում Եղիշեի նահատակության վայրը, մարմինը պահող «դուրը»՝ Հոմենքը, պիտի փնտրենք, անկասկած, Զարդունի դաշտում կամ շրջակայքում։

Եղիշեի մասին մատենագրական առաջին հիշատակությունը վերաբերում է VII դարին։ Ա. Հակոբյանը նույնիսկ ճշտում է կոնկրետ տարին՝ 684 թ.[63]։ Այս առաքյալի ավանդությունի առաջին պլան մղվելու պատճառը բացատրվում է VII դ. Այսրկովկասի պատմական իրականությամբ։ Շրջատարածքում ընթանում էին եկեղեցական վեճեր։ Չնայած այդ վեճերի հիմքում ընկած էր այս կամ այն երկրում քրիստոնեական գաղափարախոսության տարածման առաջնության խնդիրը, գործնականում, սակայն դրանք պայմանավորված էին Հայաստանի եկեղեցական ազդեցությունից դուրս գալու միտումով։ VII դ. հետո, քաղկեդոնականության ուժեղացման հաստատման հետևանքով, ցույց է տալիս Պ. Մուրադյանը, Այսրկովկասի եկեղեցիներում ընթանում էր աղգայնացման պրոցես[64]։ Եկեղեցական վեճերի այս շրջանում Այսրկովկասում քաղկեդոնիկ կամ լուսավորչական լինելու հանգամանքը պայմանավորում էր էթնիկ ինքնահաստատման պրոցեսը։ Աղվանից եկեղեցուն չհաջողվեց դավանապես հակադրվել հայոց եկեղեցուն, և գաղափարական անկախության ու ինքնահաստատման միտումը մարմնավորվեց հայոց եկեղեցուց, մասնավորապես համակովկասյան քարոզիչ համարվող Գրիգոր Լուսավորչից անկախ քարոզչի կերպարի առաջ մղումով։ Քաղաքական մտադրություններն արդարացնելուն կոչված այս ծրագրային առաքյալը պիտի համապատասխաներ մի շարք նախադրյալների. նախ, նրա գործունեության աշխարհագրական շրջանակները պիտի համապատասխանեին Աղվանից առաջին կաթողիկոսության նստավայրին, այն է Կապաղակ-Շաքի տարածքներին։ Երկրորդ՝ առաքյալը պիտի գործունեություն ծավալած լիներ բնիկ աղվանական էթնիկ միջավայրում, այն է՝ Կուրի ձախափնյա մասում, որպեսզի նրա կերպարը ծառայեր աղվանից եկեղեցու ազգայնական, տեղանական միտումներին։ Հնարավոր է, որ որպես նախատիպ ծառայեր Շաքիի շրջակայքում հայտնի տեղական որևէ քարոզչի վերաբերյալ հայտնի ավանդությունը։ Ուշագրավ է, որ Եղիշեի մասին առաջին հիշատակությունը՝ 634 թ. զուգադիպում է այն տարիներին, երբ Աղվանքի կաթողիկոսն էր Շաքիի եպիսկոպոս Եղիազարը (680—686 թթ.)[65]։ Ելնելով VII դ. երկրորդ կեսի քաղաքական իրադրությանը համապատասխանող ծրագրային առաքելի առկայության անհրաժեշտությունից, Եղիազարը, թերևս, առաջ է քաշել Աղվանից առաջին կաթողիկոսության աշխարհագրական և էթնիկ շրջանակներից իրեն քաջ հայտնի տեղական որևէ քարոզչի պատմությունը։

Անհավանական չէ, որ նույն Եղիազարի նախաձեռնությամբ Աղվանքում Մ. Մաշտոցի գործունեության ելակետ ընտրվում Գիսը՝ թերևս

---

61 Ստրաբոն, գլ. 4, 7։

62 А. Крымский, Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (классической Албании). Шеши (Сб. памяти Н. Я. Марра, Л., 193[illegible], с. 371).

63 А. Акопян, նշվ. աշխ., էջ 196—201։

64 П. Мурадян, Новое в «Кавказском культурном мире» в XI—XIII вв. (Кавказ и Византия, вып. 4, Ереван, 1984, с. 142)։

65 А. Акопян, նշվ. աշխ., էջ 277։

վերջինիս ծանրակշռությունն ավելի հիմնավորելու համար։ Կորյունի աշխատանքում Դիսը, անշուշտ, չկա, ինչպես այն բացակայում է մինչև Մ. Կաղանկատվացին մատենագրական այլ աղբյուրներում, և դա հասկանալի է։ Դիսի անհրաժեշտությունն առաջացել է VII դ.՝ Եղիշե Առաքյալի վերաբերյալ ծրագրային առասպելի հետ կապված, և բուն Աղվանքի սարածքում Մաշտոցի գործունեությունը Դիսում կենտրոնացնելու Եղիազարի գաղափարը նույնքան ծրագրային է։ Այն հիմնավորելու համար Եղիազարը կազմակերպում է Մաշտոցի կողմից իբրև թե պահված խաչի պատմություն և ինքն էլ հայտնադործում այն[66]։ «Պատմութիւն Աղուանից»-ում Աղվանքի կաթողիկոսների ցուցակում նույնիսկ հատուկ ընդգծում է պահպանվել. «Տէր Եղիազար, յեպիսկոպոսութենեն Շաքուոյ։ Սա եդիտ զսուրբ խաչն՝ ծածկեալն ի Միհրոպայ ի Դիս գիւղ և ի նոյն կենարար փայտէն մասն առեալ եդ ի Ռի գահնկանի ոսկւոջ, և զրեաց ի վերայ եթէ. «Եղիազարայ է»։ Եւ կարգ եդ յօր խաչին տօնել ի Դիս»[67]։

Աղվանից եկեղեցու ինքնուրույնության բարոյական իրավունքը հաստատելու համար ստեղծված սասսպիլում Եղիշեն բարձրացվում է ոչ միայն մինչև սիրող հզբոր՝ Հակոբի կողմից ձեռնադրվելու մակարդակին, այլև ինչ-որ նպատակով հատուկ շրջանցում է Հայաստանը. «...վիճակ առեալ իւր զարեալս՝ ճանապարհ արարեալ յԵրուսաղեմէ ընդ Պարսս՝ մտանէ ի Սասքութս, խոյս տուեալ ի Հայաստանեայցն։ Սկիզբն առնէ քարոզութեան ի Զողայ...»[68]։ Քարոզչի այս հյուսիսային մուտքը («ի Զողայ») Աղվանք, և հատուկ ընդգծված «խոյս տուեալ ի Հայաստանեայցն» արտահայտությունը մի նպատակ միայն կարող էր ունենալ՝ որքան կարելի է առաքյալի գործունեությունը հեռացնել Հայաստանից և հայկական էթնիկ միջավայրից։

Ավանդությունը պատմող մյուս աղբյուրը՝ Յայսմավուրքը, ձերբազատ է այս մտայնությունից, ուստի հաղորդում է, որ Եղիշեն, Զողից սկսելով, բազմաթիվ տեղեր քարոզեց քրիստոնեությունը. «Ի Քրդստան, ի Հայաստան, ի Պարսկաստան, և գնացեալ եհաս յաշխարհն Աղուանից՝ յՈւտ գավառ...»[69]։ Բացի այդ, Յայսմավուրքի հեղինակին անհասկանալի «Յայսմ տեզուոջ նզն սկիզբն արևելայցս եկեղեցեացս մայրաքաղաքաց և լուսաւորութեան տեղի»[70] Մ. Կաղանկատվացու արտահայտությունը, որի նպատակն էր Եղիշեի գործունեությունը կապել Աղվանից առաջին, կապադկյան շրջանի կաթողիկոսանիստի հետ, Յայսմավուրքում պարզապես բացակայում է։

Սակայն ձախափնյա Աղվանքում հայտնի բոլոր քրիստոնյա քարոզիչների մասունքները ժամանակի ընթացքում Հայոց Աղվանքի քաղաքական, տնտեսական, վարչական և մշակութային գերակշռության պայմաններում տեղափոխվում են աջափնյակ, ինչը Կաղանկատվացուն հայտնի էր «Աղուանից պատմութեան» աղբյուրը հանդիսացող «Վաչագանի՝ վեպից»։ Այսպես, Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսն Աղվանքում քրիստոնեություն տարածելու գնալիս իր հետ տարել էր սուրբ Զաքարիայի և Պանդալեոնի մասունքները, որոնց մի մասը թողել էր Յոի քաղաքում[71]։ Վատնեան դաշտում Գրիգորիսի սպանվելուց հետո աշակերտները նրա մարմինը Զաքարիայի և Պանդալեոնի մասունքների մնացած մասի հետ տեղափոխում են աջափնյակ և թաղում Ամարասում, նրա դագաղի՝ Գրիգոր Լուսա-

66 Մ. Կաղանկատուացի, էջ 213—220։
67 Նույն տեղում, էջ 344։
68 Նույն տեղում, էջ 10։
69 Յայսմաւուրք, էջ ՁԲ։
70 Մ. Կաղանկատուացի, էջ 10։
71 Նույնը, էջ 37։

վորի կառուցած եկեղեցում[72], Ավելի ուշ, Վաչագան Բարեպաշտ թագավորի ժամանակ, հայտնվում են Զաքարիայի և Պանդալեոնի ցոում պահված մասունքները[73], որոնք Վաչագանը միացնում է Ամարասում գտած մյուս մասի հետ[74] և թաղում Դյութական գյուղում[75]։

VII դ. օրագրված Եղիշեի պատմությունը շարունակում է ձախափնյակ-աջափնյակ կապի վերոհիշյալ ավանդույթը. Եղիշեի մասունքները Զարդունի գաշտից տարվում են աջափնյակ, նախ Ուռեկան, ապա՝ Ջրվշտիկ։ Այստեղ նույնպես կրկնվում է կրկնակի թաղումը. Գրիգորիսը սպանվում է ձախափնյա Աղվանքում, բերվում աջափնյակ՝ Ամարաս, այստեղից էլ՝ Դյութական, Եղիշեն նույնպես զոհվում է ձախափնյակում՝ Զարդունի գաշտում և տարվում աջափնյակ՝ Ուռեկան, ապա՝ Ջրվշտիկ։ Սակայն եթե Գրիգորիսին Զաքարիայի և Պանդալեոնի մասունքների հետ թաղում են Ամարասում՝ Գրիգոր Լուսավորչի կառուցած եկեղեցում, ապա Եղիշեի կերպարի հետևողական ստեղծողը չէր կարող թույլ տալ այս առաքյալի մասունքները նույն Գրիգորի կառուցած եկեղեցին տանելու տարբերակը, քանզի տրամաբանորեն Եղիշեն Գրիգորից շատ ավելի վաղ շրջանի քարոզիչ պիտի եղած լիներ։

Այսրկովկասի տարածքում Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի դրսևորումներին նվիրված հոդվածում Պ. Մուրադյանը ցույց է տալիս, որ V դ. հետո Գրիգորի կերպարը ստվերում թողեց քրիստոնեության առաջին քարոզիչներին, որոնք հետագայում կա՛մ ձուլվեցին նրա կերպարին, կամ էլ անձնավորվեցին նրա աշակերտների մեջ, իսկ Գրիգորն աստիճանաբար դարձավ ինչպես հայկական, այնպես էլ համտկովկասյան լուսավորիչ[76]։ VII դ. աղվանից եկեղեցու անջատողական միտումները ճնշելուց հետո, հայոց եկեղեցին անբաժան ղեկավարում էր երկու եկեղեցիները և, ըստ մասնագետների կարծիքի, մինչև XI դ. հայոց եկեղեցու ազդեցությունը շարունակվում էր անխաթար[77]։ XI դ. հետո Այսրկովկասում տեղի ունեցած դավանական և մշակութային այլէթնիկ ներխուժումների, քաղաքական ճգնաժամային վիճակների հետևանքով հայոց եկեղեցու դիրքերը թուլացան։ IX դ. Վրաստանում առաջ քաշվեց Նինոյի առասպելը և այստեղ Գրիգոր Լուսավորչի կերպարը մղվեց երկրորդ պլան[78]։ Այս շրջանում Եղիշեի պատմությունը չէր կարող քիչ թե շատ նկատելի դեր խաղալ Աղվանքում։ Հայաստանի նման, այստեղ քրիստոնյա լուսավորիչներից առաջինը, գլխավորը և, թերևս, միակը ընդունվում էր Գրիգորը կամ սրա թոռ Գրիգորիսը։ «Թե ինչ պատահեց Գրիգորի պաշտամունքի հետ Աղվանքում, դժվար է ասել,— գրում է Պ. Մուրադյանը,— պետք է ենթադրել, որ տեղական ընակչության մի մասի մահմեդականացման հետևանքով պաշտամունքի ոլորտը կրճատվեց»[80]։

Մեր նյութերը, կարծում ենք, հնարավորություն են տալիս որոշակի պարզություն մտցնել այս հարցում։ Հայ եկեղեցու ազդեցության թուլացման պայմաններում բուն Աղվանքի տարածքում, ուր արդեն հայտնի էր և տարածված Եղիշեի ավանդությունը, առաջին պլան մղվեց ու ծաղկեց Եղիշի առաքյալի

---

72 Նույն տեղում, էջ 39։

73 Նույն տեղում, էջ 56—64։

74 Նույն տեղում, էջ 80—81։

75 Նույն տեղում, էջ 86։

76 Н. Мурадян, Кавказский культурный мир и культ Григория Просветителя (Кавказ и Византия, т. 3, Ереван, 1982, с. 10).

77 Н. Марр, Аркаун, монгольское название христиан, СПб., 1905, с. 6—7:

78 С. Т. Еремян, Идеология и культура Албании III—VII вв., (Очерки истории СССР III—IX вв., М., 1958, с. 328); П. Мурадян, Новое в Кавказском культурном мире, с. 142—143.

78 П. Мурадян, Кавказский культурный мир..., с. 9—11.

79 Նույն տեղում, էջ 18—19։

80 Նույն տեղում, էջ 20։

պաշտամունքը։ Հետևաբար՝ շրջանի նյութերում ոչ միայն Նուխի-Ղաբալա տարածքում, այլև շատ ավելի լայն շրջաններում են հիշատակվում Եղիշեի անվան հետ կապված եկեղեցիները, վանքերը, մատուռները, ժողովրդական ուխտատեղիները (Կուրի ձախափնյա հարող շրջաններից սկսած, Արեշի գավառով՝ մինչև Շաքիի արևմտյան տարածքները)։ Առաքյալն ինքն ազգայնացավ ոչ միայն պաշտամունքի շրջանակներում, այլև էթնիկ պատկանելությամբ. նրան սկսեցին վերագրել ուդիական ծագում։ Այս հանգամանքը Եղիշեի կերպարից ջնջեց դավանական կնիքը և որպես սուրբ ընդունելի դարձրեց Հայաստանի քրիստոնեական երկու դավանանքներին (լուսավորչական և ուղղափառ[81]) հետևող ուդիների, այնպես էլ մահմեդականացած ուդիների համար։ Որպես ոյդպիսին, Եղիշե առաքյալի սրբավայրերը (ընդհուպ մինչև գործող քրիստոնեական եկեղեցիները) քրիստոնեական զաղափարախոսության ֆունկցիա իրականացնելուց զատ, իրենց վրա վերցրին էթնիկ միավորի ինքնահաստատման միջոցի դերը՝ դառնալով էթնոձիգ օջախներ։

Չնայած ավանդության՝ առաքյալի անունն աջափնյակ տեղափոխելու անհաղորդալ հաղորդմանը, Եղիշեի պաշտամունքն ու անունն այստեղ գործածական հող չգտան։ Աջափնյակի քրիստոնեական սրբավայրերից միայն երեքն են կրում Եղիշե անունը. Արցախի Մարդակերտի շրջանի Եղիշե Առաքյալի վանքը՝ Ջրվշտիկը[82] և Մարտունու շրջանի Եղիշեի կամ Ղիշա վանքը[83]։ Վերջինս միակ եկեղեցին արձանագրություններում կոչվում է Եղիշայ կոյսի անապատ[84]։ Ավանդությունը Ղիշա վանքի (ինչպես և Ղիշա սարի) անունը կապում է Եղիշ անունով մի նորապսակ քաջ երիտասարդի հետ, որը հանուն իր կնոջ պատվի զոհվել է տեղի ինքնիշխան բռնակալներից մեկի դեմ պայքարի ժամանակ[85]։ Ավանդությունն այս Եղիշեին խիստ աշխարհիկ մարդ է ներկայացնում։ Չնայած արձանագրության մեջ Եղիշեն կուս (կույս) է կոչված, այնուամենայնիվ տեղի բնակչությունը վանքը հաճախ անվանում է Առաքել (առաքյալ)[86]։ Այստեղ, թերևս, պետք է տեսնել Եղիշեի անվան հետ Առաքել մակդիրը մշտապես օգտագործելու լեզվական ավանդույթը։ Սակայն «Առաքել» բառի բովանդակային ընկալումը՝ որպես քրիստոնեական քարոզչի, այստեղ չի դիտվում։ Արցախում ժողովրդական սրբավայրերի շարքում Եղիշե անունով սրբավայր ընդհանրապես չկա[87], հանգամանք, որը ևս մի անգամ հաստատում է Եղիշե առաքյալի հնարավոր գործունեությունը կամ ստեղծված առասպելը ձախափնյակի հետ կապելու ճշմարտացիությունը։

Այսպիսով, Եղիշե առաքյալի գործունեության վերաբերյալ մատենագրական տեղեկությունները և ժողովրդական ավանդազրույցները համապատասխանում են և աշխարհագրորեն կապվում այսօր Ադրբեջանի Շաքիի, Վարդաշենի և Կուտկաշենի շրջանների, XIX դ. Նուխի և Ղաբալա, պատմական Շաքիի և Կապաղակ գավառների տարածքին։ Սակայն թե՛ Մ. Կաղանկատվացին, թե՛ Յայսմաւուրքը, թե՛ հետագա ժողովրդական զրույցները վերոհիշյալ բոլոր բնակավայրերը, ինչպես տեսանք, թվարկում են Ուտի գավառում կամ ուտիացոց աշխարհում, մինչդեռ Ուտի-Ուտիքը, ըստ «Աշխարհացույցի», Մեծ Հայքի տասներկուերորդ աշխարհն է և տաս մտից կայ Երասխայ ընդ մէջ

---

81 Վրացադավան միջավայրում Եղիշեի եկեղեցին հիշատակվում է դեռևս XIV դ. (Գ. Մուրադյան, այսպես՝ վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 11)։

82 Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-հարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 67։

83 Նույն տեղում, էջ 152։

84 Նույն տեղում։

85 Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, Երևան, 1983, էջ 146—147։

86 Ս. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, 1980, էջ 57)։

87 Նույն տեղում։ И. Петрушевский. О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха. Баку, 1930.

Արցախայ եւ Կուր գետոյ»[88], այսինքն գտնվում է աջափնյակում, Կուրից հարավ։ «Պատմութիւն Աղուանից»-ում նույնպես երեք անգամ ուղղակի մատնանշվում է Ուտի գավառի հյուսիսային սահմանը՝ Կուր գետը. «անց յայս կոյս Կուրտկան գետոյն՝ տարածեալ յՈւտիացւոց գաւառն»[89], «երթեալ, հասեալ յՈւտի գաւառն՝ իջեալ բանակէին առ ափն Կուրտկան գետոյն»[90], «անցանէր յՈւտի գաւառ ընդ գետն Կուր»[91]։

Միայն նշված երիներները չէ, որ ցույց են տալիս Մ. Կաղանկատվացու կողմից Ուտի գավառ, ուտիացոց աշխարհ արտահայտությունների ոչ միանշանակ օգտագործման փաստը։ Այսպես, անդրադառնալով Մ. Մաշտոցին վերաբերվող հատվածին, վերհիշենք, թե ինչ է հաղորդում աղբյուրը. «Անցանելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ հասանել ի սահման արեւելից՝ ի գաւառն Ուտիական... եւ ձգեր քարոզութիւն ավետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս, և ի Լփինս, և ի Կասպս, և մինչեւ ի դուռն Ջորայ»[92]։ Բ. Հարությունյանը գտնում է, որ այստեղ գործ ունենք Ուտիք-Աղվանք Լփինք-Կասպք-Ջորա շարքով երկրների աշխարհագրական դասավորության հետ[93]։ Մեզ թվում է, որ այդ դեպքում լիովին ավելորդ կլիներ առաջին նախադասությունը, որտեղ Մ. Կաղանկատվացին մասնավորեցնում է Մաշտոցի «գաւառն Ուտիական» հասնելու հանգամանքը, միաժամանակ «յաշխարհն Ուտիացւոց»-ը իմաստային այլ ոլորտում է գտնվում թվարկված երկրների շարքում։ Եթե այս հատվածը հասկանանք այսպես՝ հասնելով Ուտիական գավառը, Մաշտոցը քարոզում է ուտիների աշխարհում՝ Աղվանքում, Լփինքում, Կասպքում..., ապա գործ կունենանք «ուտի» տերմինի ընդգրկուն, էթնիկ իմաստով օգտագործման երևույթի հետ։

Աշխատանքի երկրորդ գրքի 32-րդ գլխում հեղինակը Ուտի գավառը ուղղակի տեղադրում է Կուրի ձախ կողմում. «Ընդ այսոսիկ ապա ժամանակ տարրէն խառնակութեամբ գլխաւորք ազգաշաղախ Աղուանից աղծապիղծք եղեալ. նախ՝ թագաւորազին Կողթայ տեառն տունն, ապա յԵրշակաշեն գաւառի երեք տունք՝ Դաստակերտն, Ճնշմիայն, Մամշեղուն և Կուրգետոյն յայնկոյս տունն Հեչերուոյ, և յՈւտի գաւառի ի Գիս Վարազ Պերոժի տունն...»[94]։ Վարազ Պերոժը Վարազ Գրիգորի չորս որդիներից ավագն էր (Վարազ Փերոժ, Ջուանշիր, Յեզուտ Խոսրով, Վարազման)[95] և Ջիվանշիրի մահից հետո Շաքվա նախկին եպիսկոպոսը, վերոհիշյալ հեռատես կաթողիկոս Եղիազարը հենց սրա որդի Վարազ Տրդատին է Աղվանից իշխան առաջադրում[96], ինչով լրացուցիչ հաստատվում է, որ ինքնուրույնության տանող իր քաղաքականությունը Եղիազարը կապում էր Շաքվա կամ Գիսի իշխանական տան օժանդակության հետ, այլ կերպ ասած՝ ձախափնյակի։

Համադրությունները ցույց են տալիս, որ այն բոլոր հատվածներում, երբ «Ուտի գաւառ», «ուտիացոց աշխարհ» արտահայտությունները «Պատմութիւն Աղուանից»-ում կապվում են ձախափնյակի հետ, դեպքերի ընթացքն այս կամ այն ձևով առնչվում է կաթողիկոս Եղիազարի գործունեությանը։ Եթե մեզ հետաքրքրող հատվածները քննենք «Պատմութիւն Աղուանից-ի» ընդհանուր շարադրանքի հենքի վրա, ապա կտեսնենք, որ դրանք ամբողջովին տեղադրվում են աղբյուրի VII դ. շարադրանքում, մասնավորապես այն հատվածում, որը

---

88 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 109։

89 Մ. Կաղանկատուացի, էջ 99։

90 Նույն տեղում, էջ 103։

91 Նույն տեղում, էջ 232։

92 Նույն տեղում, էջ 95։

93 Բ. Հարությունյան, Լփինքի տեղադրության հարցի շուրջ (Բանբեր Երևանի համալսարանի, 1981, № 1, էջ 111)։

94 Մ. Կաղանկատուացի, էջ 212—213։

95 Նույն տեղում, էջ 172։

96 Նույն տեղում, էջ 231։

մասնագիտների կողմից խմբավորվել է «երկրորդ շարադրանքի» մեջ և, ինչպես ցույց է տալիս Ա. Հակոբյանի ուսումնասիրությունը, գրվել է 683—685 թթ. միջև։ Ա. Հակոբյանի կողմից այդ շարադրանքը պայմանականորեն անվանվել է «684 թ. պատմություն»[97]։ Այն ընդգրկում է առաջին գրքի 27—30 և երկրորդ գրքի 18—45 գլուխները[98], որտեղ պատմվում է Ջիվանշիրի, Վարազ Տրդատի, եպիսկոպոս Իսրայելի և Մաշտոցի գործունեության մասին։ Ահա այս «684 թ. պատմության» մեջ էլ գլխավորապես դրսևորվել են ժամանակի կարևորագույն քաղաքական դեմքերից մեկի՝ կաթողիկոս Եղիազարի, քաղաքական միտումները և, ըստ երևույթին, դրվել են հենց վերջինիս թելադրանքով։ Չանդրադառնալով Եղիազարի քաղաքական գործունեության այլ դրսևորումներին, նշենք միայն, որ, ինչպես երևաց վերևում, կաթողիկոսն Աղվանքի հոգևոր անկախության առավել հետևողական կողմնակիցներից էր և այդ նպատակին ուղղված նրա ջանքերը կենտրոնացել էին ձախափնյա Աղվանքի դերի բարձրացմանը։ Մինչև կաթողիկոս դառնալը Շաքիի եպիսկոպոսը լինելով, Եղիազարն անշուշտ ամուր հենարան ուներ տեղական ավագանու մեջ։ Այդ ավագանուն ռեալ աշխարհիկ իշխանություն ապահովելու նպատակն ուներ, անկասկած, Ջիվանշիրի մահից հետո Վարազ Տրդատին իշխանության գլուխ բարձրացնելը։ Ջիվանշիրի սպանության մեջ Եղիազարը և Վարազ Տրդատը հավանաբար անմասն չէին։ Համենայն դեպս, աղբյուրում պահպանված որոշ արտահայտություններ հուշում են այդ հնարավորությունը. նախ, Վարազ Տրդատի տոհմակիցներից ոմանք բացասաբար էին վերաբերվում նրա գահակալությանը. «հասանէր իշխանութեանն գահ, թէպէտ և անբեղուն միտս ունէին ընդ նմա ոմանք ի մախայորդոր տոհմակցացն»[99], ապա՝ իշխանությունը պահելու համար նա հավանաբար ստիպված էր նվաճել սպանությունից դժգոհ ավագանուն. «ընդունէր զգերագոյն գահն... և իշխել ամենայն թագաւորութեանն Աղուանից և Ուտիացւոց գաւառին նուաճեալ ընդ ինքեամբ զամենեսեան՝ յարազուարճ ցնծութեամբ յաղթող և հզօր գոլով ի վերայ սահմանաց իւրոց»[100]։ Եվ, վերջապես, Եղիազարն ու Վարազ Տրդատը ստիպված էին Ջիվանշիրի մահվան վրեժը լուծելու համար Կասլաղակն ու Կովկաս լեռան ստորոտը ապաստակող հոների մոտ արդարանալ, որ այդ սպանության մեջ իրենք մեղք չունեն. «Ապա առաքէր (Վարազ Տրդատը— Հ. Ա.) պատգամ առ իշխանն Հոնաց զմեծ եպիսկոպոսապետն Եղիազար... թէ չէաք մեք հաղորդ սպանմանն Ջուանշիրի»[101]։

Այսպես թե այնպես, VII դ. գրված պատմության երկրորդ շարադրանքում Աղվանքի պատմության նախամարզպանական շրջանի մի շարք կարևոր իրադարձություններ, որոնք ըստ էության մեծ մասամբ մտացածին էին և մինչ այդ չէին կարող արտացոլվել մատենագրության մեջ, տեղայնանում են Շաքի-Կապաղակ գավառներում։ Այդ առասպելների պատմականությունը հիմնավորելու համար Եղիազարը կազմակերպում է Գիսում Մ. Մաշտոցի կողմից իբրև թե պահված խաչի պատմությունը և ինքն էլ հայտնաբերում այն։ Այս պայմաններում Շաքի-Կապաղակ տարածքի էթնիկ տարրը, բնականաբար, մղվում է առաջին պլան և եթե մինչ այդ վերոհիշյալ գավառներում ուդիների առկայության վերաբերյալ մատենագրական տեղեկություն չկա, ապա «Պատմութիւն Աղուանից» VII դ. երկրորդ շարադրանքի տեղեկությունների մի մասը թերևս կողմնակի, եթե ոչ ուղղակի վկայությունը և այդ տարածքում ուդիների տարաբնակման վերաբերյալ։

Այս տեսանկյունով հարցին նայելու դեպքում հասկանալի է դառնում ձախափնյակի վերաբերյալ «ուտիացւոց աշխարհ», «Ուտի գավառ» (պետք է

---

97 Ա. Акопян, նշվ. աշխ., էջ 199:

98 Նույն տեղում, էջ 197։

99 Մ. Կաղանկատուացի, էջ 231։

100 Նույն տեղում, էջ 233։

101 Նույն տեղում, էջ 232։

կարգալ «ուտիների գավառ») արտահայտությունների իմաստային ընդգծումը։ Դրանք պիտի ընդգծեին ուդիների մշակութային ու քաղաքական դերը Աղվանքի պատմության մեջ և ձախափնյակում Ուտի-Ուտիք վարչական միավորի առանձնացման հավանություն չունեն։ Հիրավի, այդ որակի բոլոր հատվածները մնում են երկրորդ շարադրանքի շրջանակներում (1 գիրք, գլ. 27,30, 3 գիրք, գլ. 28, 32, 33) և միայն Եղիշե առաքյալի գործունեության վերաբերյալ նույնիմաստ շարադրանքն է դուրս մնում այդ շրջանակից (1 գիրք, գլ. 6,7)։ Սակայն այդ ողջ պատմությունը կոչված է նույն հանգամանքներով, ծրագրված է մյուսների հետ համատեղ և գոնե իր հետապնդած նպատակներով ծառայում է նույն գործին ու ժամանակագրորեն շարադրված է նրանց հետ։

Այսպիսով, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» առաջին և երկրորդ գրքերում հանդիպող «Ուտի գաւառ»-«ուտիացոց աշխարհ»-«ուտիացոց գաւառ» արտահայտությունները միանշանակ չեն օգտագործված, սակայն նաև միմյանց չեն հակասում։ Մի դեպքում դրանք ունեն էթնիկ իմաստ և վերաբերվում են ձախափնյակին, մյուս դեպքում շարունակում են նշանակել նախկին հայկական, V դ. հետո Աղվանքի տարածքում գտնվող Ուտիք գավառը։ Դրանցում հիշատակվող տեղանունները համապատասխանաբար շարունակում են պահպանվել Կուրի ձախ ու աջ ափերին և իրենց վրա կրել պատմական անցյալում խաղացած դերի վկայությունները։ Եղիշե առաքյալի առաքելությունը կապվում է ձախափնյակի հետ և, ըստ երևույթին, X դ. սկսած էթնոձիգ մեծ դեր է խաղացել ձախափնյակում տարածված ուդիների, թերևս նաև աղվանական այլ էթնիկ ընդհանրությունների հետագա ճակատագրում։

КУЛЬТ АПОСТОЛА ЕГИШЕ СРЕДИ УДИН И К ВОПРОСУ О ПРОВИНЦИИ УТИК

Г. С. АРАКЕЛЯН

Резюме

В зоне исторических областей Шеки—Капалака Кавказской Албании (ныне Шекинский, Варташенский и Куткашенский районы Азербайджана) в XVIII—XIX вв. шел процесс исламизации и языковой тюркизации оставшихся потомков одного из албанских народов—удинов, Лишенный политической власти, четких и объединяющих этнических культурных ориентиров (они не обладали ни единым языком, ни единым сознанием исторической территории, ни памятью исторического прошлого, ни единой конфессией, ни единой культурной ориентацией, ни даже единым этнонимом), удинский народ сгруппировался вокруг идеи и культа апостола Егише. Культ апостола Егише и материализация этого культа играли важную этносохраняющую роль. Роль данного культа в XVIII—XIX вв. является продолжением той программной цели, которая была поставлена перед добивавшимся власти и самостоятельности политическими деятелями Левобережной Албании, боровшимися против Правобережной, армянской Албании. В сложных конфессиональных процессах Закавказья VII в. моральным и идеологическим оправданием этой цели было и обоснование самостоятельной христианизации левобережной Албании апостолом Егише.

Деятельность апостола Егише автор VII в. рукописи «История страны Алуанк» описывает в «стране утиев». Сравнение выражений «провинция Утик», «страна утиев», «провинция утиев» в первых двух книгах рукописи «История страны Алуанк» показывает, что они употреблены неоднозначно: в одних случаях они имеют этноуказывающий смысл и относятся к левобережной зоне Албании VII в., других административный.